Կին և քաղաքականությունը

2015 հոկտեմբեր

Անվճար հավելված

www.WomenNet.am

Պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումն արգելվում է. առաջարկվում է խստացնել օրենսդրությունը

էջ 3

Ո՞ւր են աղջիկները

Հայաստանում նորածինների սեռերի համամասնությունը խախտվել է դեռևս վաղ 1990-ականներից և ներկայումս կազմում է 114-115 տղա՝ 100 աղջկա դիմաց: Այն ավելի քան կրկնակի անգամ բարձր է բնականից եւ աշխարհում ամենաբարձրերից մեկն է՝ զիջելով միայն Չինաստանին (118) ու Ադրբեջանին (116):

Արական սեռի նորածինների գերակշռության ցուցանիշը Հայաստանի մարզերում տատանվում է 111-124-ի սահմաններում, և, օրինակ՝ Արագածոտնի ու Գեղարքունիքի տվյալները գերազանցում են Չինաստանի ցուցանիշը: Տարբերությունը միայն այն է, որ Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման են դիմում հիմնականում երրորդ և հաջորդ երեխաների ժամանակ, և այդ դեպքում արդեն համամասնությունը հասնում է աշխարհում չգերազանցված ցուցանիշի՝ 160 տղա 100 աղջկա դիմաց:

Լուսանկարը՝ Լիլիան Գալստյանի

Աղջիկների օրը

Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական օրացույցում հոկտեմբերի 11-ը նշվում է որպես Աղջիկ երեխաների միջազգային օր: Շատերի մոտ հարց է ծագում՝ ինչո՞ւ է ՄԱԿ-ն առանձնացնում աղջիկներին: Նպատակը մեկն է՝ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել այն հատուկ խնդիրներին, որոնց բախվում են աղջիկները ողջ աշխարհում:

Այդ խնդիրները մոլորակի տարբեր վայրերում տարբեր են՝ մի տեղ դա վաղաժամ ամուսնությունն ու ծննդաբերությունն է, մյուս տեղում՝ կրթության անհասանելիությունը, երրորդում՝ սեռական օրգանների ծիսական խեղումը...

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեզանում այսօր աղջիկ երեխաների նկատմամբ ծառացած, թերևս, մեծագույն խնդիրը պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներն են, ինչի պատճառով մեր երկրում ամեն տարի չի ծնվում մոտ 1500 աղջիկ:

Թեմայի շարունակությունը՝ էջ 2

«Դեռահասների ուժը. 2030 թ. տեսլականը»

Այս կարգախոսի ներքո ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը նշեց այս տարվա Աղջիկների միջազգային օրը: Օրվա խորհուրդն անմիջական կապ ունի այս տարվա սեպտեմբերին միջազգային հանրության կողմից ընդունված Կայուն զարգացման նպատակների նոր օրակարգի հետ, որը նախատեսվում է իրականացնել մինչև 2030 թվականը: Դա նշանակում է, որ 2015-ին ծնված աղջիկների սերունդը դեռահաս կլինի հենց այդ ժամանակ՝ 15 տարի անց, և այսօր է պետք մտածել նրանց համար ավելի լավ ապագա ունենալու մասին:

Այսօր աշխարհում ապրում է 10-19 տարեկան 600 մլն աղջիկ, որոնցից յուրաքանչյուրն ունի անհատական անսահման ներուժ: Սակայն վտանգ կա, որ այդ ներուժը կարող է «անհետանալ» միջազգային զարգացման օրակարգից: Նրանցից շատերը զրկված են կրթության իրավունքից, հետապնդվում և նույնիսկ սպանվում են սովորել համարձակվելու դեպքում: Ամեն օր 7 հազար անչափահաս աղջիկ է երկրագնդի տարբեր ծայրերում ստիպողաբար ամուսնանում: Նրանց շրջանում մահվան հիմնական պատճառը հատկապես զարգացող երկրներում հղիության և ծննդաբերության բարդություններն են:

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը կոչ է անում ՄԱԿ-ի անդամ պետություններին ուշադրություն դարձնել դեռահաս աղջիկների հիմնախնդիրներին՝ ներդրումներ կատարելով նրանց ներկայի և ապագայի համար, որոնք կարող են հսկայական ազդեցություն ունենալ՝ 2030-ին ավելի լավ աշխարհ ունենալու գործում:

Դեռահասության շրջանում աղջիկների որակյալ կրթությանը, առողջությանն ու զարգացման հնարավորություններին լավագույնս աջակցելու պարագայում նրանք կունենան ներուժ աշխարհը փոխելու որպես վաղվա մայրեր, ուսուցիչներ, բժիշկներ և այլ ոլորտների աշխատողներ, ձեռնարկատերեր, տնտեսության ղեկավարներ և քաղաքական առաջնորդներ:

Փաստաշար

Թվերն են խոսում

Հայաստանում բնակվում է 776.5 հազար 0-19 տարեկան երեխա, նրանցից 364.5 հազարը կամ 47%-ը աղջիկ են:

Մեր երեխաների, այդ թվում՝ աղջիկների, 37,3%-ն ապրում է աղքատության մեջ, նրանցից 3,3%-ը ծայրահեղ աղքատ է: Բազմանդամ ընտանիքներում ապրող երեխաներից աղքատ է յուրաքանչյուր երկրորդը (47,5%):

Հայաստանում աղջիկ երեխա ցանկացող մեկ ընտանիքին բաժին է ընկնում տղա երեխա ցանկացող վեց ընտանիք:

2014-ին Հայաստանում ծնվել են 20.287 աղջիկ և 22.869 տղա, մինչդեռ բնական համամասնությունը 100 աղջկան՝ 102-106 տղա է:

Պետական և ոչ պետական մանկատներում գտնվող երեխաների 47,5 տոկոսը աղջիկներ են:

2014-ին Հայաստանում 16-19 տարեկան աղջիկների 5,4 տոկոսն ամուսնացած էր, 0,1 տոկոսը՝ բաժանված:

2014-ին հղիության արհեստական ընդհատման դիմել է 15-19 տարեկան 500 կին:

2014-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների 31,4 տոկոսն աղջիկներ են:

Հայաստանում 2014-ին նորածին աղջիկներին ամենաշատ կոչել են Նարե, Մարի, Միլենա, Մանե:

Ավելի լավ ապագա երեխաների համար

ՅՈՒՆԻՍԵՖ-ի բարի կամքի դեսպաններ՝ Շակիրան և Անջելիք Քիջոն իրենց ելույթներով նշանավորեցին սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 70-րդ հոբելյանական նստաշրջանի շրջանակներում Կայուն զարգացման նպատակների ընդունումը:

Կայուն զարգացման գագաթնաժողովի բացման արարողության ժամանակ Շակիրան կատարեց Ջոն Լենոնի Imagine երգը՝ նվիրված աշխարհի խաղաղությանը. «Կարող եք մտածել, թե երազող եմ, սակայն ես միակը չեմ... Միայն պատկերացրեք երեխաների համար ավելի լավ ապագա»:

Նա ասաց, որ ՅՈՒՆԻՍԵՖ-ի օրհներգ դարձած այս երգը նվիրում է սիրիացի փախստական երեխաներին, և կոչ արեց համաշխարհային առաջնորդներին և բոլոր մարդկանց արդարացի լուծում գտնել ներկայիս իրավիճակին: Նրա խոսքով՝ «երեխաները չպետք է վճարեն պատերազմների համար»:

«Ես հիշում եմ Ջոն Լենոնի երգի բառերը՝ «Պատկերացրու մարդկանց, ովքեր կիսում են աշխարհը»: Ինչո՞ւ մենք չենք կարող չկիսել աշխարհը: Ի՞նչն է մեզ խանգարում»,- ասել է երգչուհին:

Հայտնի աֆրիկացի երգչուհի Անջելիք Քիջոն, ով ՅՈՒՆԻՍԵՖ-ի բարի կամքի դեսպանն է 2002 թվականից, իր «Աֆիրիկա» երգի նոր հուզիչ տարբերակը երգեց:

Նպատակ թիվ 4

Որակյալ կրթություն բոլորի համար

Կայուն զարգացման չորրորդ նպատակն է՝

- Ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ուսման հնարավորությունները ողջ կյանքի ընթացքում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով՝ այսօր ավելի քան 140 միլիոն երեխաներ և դպրոցական տարիքի դեռահասներ սովորելու հնարավորություն չունեն:

«Առաջին հերթին կրթությունը» կարգախոսով հանդիպումը, որը կայացել է սեպտեմբերի 26-ին Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի կենտրոնակայանում Կայուն զարգացման գագաթնաժողովի շրջանակներում, հավաքել էր համաշխարհային առաջնորդներին և կրթության ոլորտի ակտիվիստներին: Քննարկման գլխավոր թեման է եղել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի համանուն նախաձեռնությունը:

Հայտնի պակիստանցի իրավապաշտպան, այս տարվա Նոբելյան մրցանակակիր 18-ամյա Մալալա Յուսուֆզայը, ով չորս տարի առաջ մահափորձի է ենթարկվել Թալիբանի կողմից աղջիկների կրթության իրավունքը պաշտպանելու համար, դիմել է պետությունների և կառավարությունների ղեկավարներին՝ կոչ անելով ապահովել յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքից օգտվելու հնարավորությունը: «Աշխարհում ոչ մի երեխա չպետք է զրկված լինի կրթության հնարավորությունից, նույնիսկ պատերազմի պայմաններում»,- ասել է Մալալան:

«Կրթությունը կրակի տակ». ՅՈՒՆԻՍԵՖ-ի զեկույց

Ավելի քան 13 միլիոն երեխա Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի 9 երկրներում տեղի ունեցող հակամարտությունների և քաղաքական իրադրության հետևանքով զրկված են դպրոց հաճախելու հնարավորությունից՝ ահազանգում է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի այս տարվա հուլիսին հրապարակված «Կրթությունը կրակի տակ» զեկույցը:

«Մի տարածաշրջան, որն ընդամենը մի քանի տարի առաջ նպատակ ուներ կրթությունը համընդհանուր հասանելի դարձնել, այսօր հայտնվել է աղետալի իրավիճակում... Դպրոցների և կրթական ենթակառուցվածքների վրա հարձակումները, որոնք երբեմն միտումնավոր են արվում, երեխաների դպրոց չհաճախելու հիմնական առանցքային պատճառն են»,- ասվում է զեկույցում:

Դպրոցի ճանապարհը նշանակետի տակ է...

«Երեխան մի չխկոց է լսում, վախեցած՝ վազելով տուն է գալիս, գիտի՝ թե կրակում են: Ամեն օր, ամեն ժամ, գիշեր-ցերեկ անդադար կրակում են: Հիմա ավտոմատով կրակոցներ հազարից մեկ կլսես, հիմնականում միանշյոտ ու ՊՇԿ-ով են սկսել կրակել»,- «Առավոտի» հետ զրույցում պատմում են Տավուշի մարզի սահմանամերձ Չինարի գյուղի բնակիչները:

Նրանց խոսքով՝ գերակտիվացած թշնամու թիրախում են գյուղի մանկապարտեզը, դպրոցը, առաջին ճակատում գտնվող տները, գյուղամիջում հավաքվող մարդիկ:

Չինարիի դպրոցը չի փակվել, երեխաները, ճիշտ է՝ վախվխելով, բայց գնում են դասերի, հրետակոծության պատճառով այս գյուղում ոչ մի երեխա դասերից չի բացակայում: Երեխաների անվտանգության համար դպրոցի մի քանի լուսամուտ, որոնք նայում են դեպի սահմանը, քարերով փակված է, դասարաններում արևի լույս չի թափանցում. օրը ցերեկով աշակերտները ստիպված են լինում էլեկտրական լույսի տակ դասերը պարապել:

«Դպրոցի ճանապարհը նշանակետի տակ է, դպրոց գնալն էլ շատ վտանգավոր է, գնում են արագ-արագ, վազելազ»,- պատմում են գյուղի բնակիչները:

Հետազոտություններ

Ո՞ւր են աղջիկները

«Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում» ՄԱԲՀ-ի 2012-ին արված հետազոտությունը ցույց է տալիս, որ եթե շարունակվի աղջիկների ծնունդը խափանելու գնով տղա ունենալու արատավոր երևույթը, ապա՝

. Հայաստանը մինչև 2060 թ. կկորցնի գրեթե 93.000 պոտենցիալ ապագա մայր

. Տարեկան չծնված նորածին աղջիկների թիվը մինչև 2060 թ. կհասնի 2000-ի

. Երկրի բնակչությունը կնվազի հավելյալ 80.000 մարդով (սա ներկայումս Հայաստանի 2 տարվա ծնունդների թիվն է) և, այլ հավասար պայմաններում, կկազմի մոտավորապես 2,6 միլիոն:

Սեռերի խախտված համամասնության մասին են վկայում նաև 2014-2015 թթ. ուստարում Երևանի հանրակրթական դպրոցների 1-ին դասարան գնացած աղջիկների թիվը, որը 47% տոկոս է կազմում: Գեղարքունիքում և Վայոց ձորում առաջին դասարանցի աղջիկները 44% են, Շիրակում և Լոռիում՝ 45%, Արմավիրում և Արագածոտնում՝ 46%: Առաջին դասարանցիների թվում սեռերի համամասնությունը գրեթե չի խախտված միայն Տավուշի մարզում (49,6 %), Սյունիքում և Կոտայքում (48%):

Լուսանկարը՝ Լիլիան Գալստյանի

«Եթե այս միտումը չկասեցվի, ապա ամուսնական ամենաակտիվ տարիքի՝ 20-39 տարեկան տղամարդկանց մի մասը շուտով սկսելու է ընտանիք կազմելու դժվարություններ ունենալ և, կին չգտնելով, մեկնել երկրից՝ այդպիսով խթանելով արտագաղթը: Բացի այս, սա նաև այլ խնդիրներ առաջ կբերի (միայնակ ծերություն, սեռական հողի վրա կրիմինալի աճ և այլն- խմբ.)»,- պարզաբանում է ժողովրդագրության հարցերով միջազգային փորձագետ, դոկտոր Քրիստոֆ Գիլմոտոն:

Պատճառները երեխն են

Մասնագետները պտղի սեռի նախածննդյան ընտրության երեք հիմնական պատճառ են նշում՝

- տղա երեխայի նախապատվությունը ընտանիքներում, ինչը պայմանավորված է առկա գենդերային անհավասարությամբ, մեր հասարակության պատկերացումներում կնոջ ավելի նվազ դերով: Տղան համարվում է օջախի ծուխը վառ պահողը, հողի և այլ ունեցվածքի արժանի ժառանգը և այլն: Աղջիկն այդ սպասումների առումով ավելի քիչ արժեք է ներկայացնում, քանի որ ծնողների կարծիքով տնից գնացող է,
- պտղի սեռը հղիության վաղ ժամկետներում որոշող ժամանակակից սարքավորումների առկայությունը: Զավեշտալի է, բայց փաստ՝ արդիական տեխնոլոգիաներն այսօր նպաստում են հետամնաց ավանդույթի և կարծրատիպերի պահպանմանը,
- երիտասարդ ընտանիքներում տարածված 1-2 երեխայով սահմանափակվելու միտումը, որը Հայաստանում մեծապես պայմանավորված է սոցիալ-տնտեսական բնույթի պատճառներով:

Գենդերցիդի զոհերը. 200 մլն կորած աղջիկներ

ՄԱԿ-ի գնահատականներով՝ պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումները մի շարք երկրներում բերել են մոտ 200 մլն աղջիկների կորստի:

Երևույթը ստացել է գենդերցիդ անվանումը: Փորձագետներն ահազանգում են, որ պտղի նախածննդյան ընտրության կամ նորածին աղջիկների սպանության հետևանքով «կորած» աղջիկների թիվը 20-րդ դարի բոլոր ցեղասպանությունների զոհերի թվից մեծ է:

Նույնիսկ եթե այսօր աշխարհում դադարեցվեն սեռով պայմանավորված հղիության ընդհատումները, ապա խախտված գենդերային բալանսը վերականգնելու համար առնվազն 40-50 տարի կպահանջվի:

Ինչո՞վ է պայմանավորված տղա երեխաների նախապատվությունը

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (Հայաստան) «Չծնված աղջիկներ Հարավային Կովկասում» հետազոտությունը տալիս է այս հարցի պատասխանները:

Հարցումները բացահայտել են հետևյալ պատճառները՝

- տարեց ծնողների խնամք (ֆինանսական օգնություն, համակեցություն),
- տղաներն ամենօրյա խնդիրների ավելի արդյունավետ լուծումներ են գտնում, քան աղջիկները,
- աղջիկները հաճախ ընկալվում են որպես հոգսերի աղբյուր (դժվար է հետևել նրանց կյանքին, մեծացնելն ավելի ծախսատար է, իսկ ապագան՝ մտահոգիչ):

Հարցվածների մեծ մասը նշել է, որ ամուսնանալուց հետո աղջիկն ուրիշ ընտանիքի է պատկանում. «...Քեզ ավելի լարված ես զգում քո աղջկա տանը, միշտ վախենում ես, որ նրա ամուսինը քեզ կասի, որ չափից շատ ես ուտում»:

Սակայն ընտանեկան գծի պահպանումը երբեմն նույնիսկ ավելի կարևոր հանգամանք է համարվում, քան որդուց նյութական օգնությունը: Իրավիճակն այնքան ծայրահեղական է, որ միայն աղջիկ ունեցող ծնողները կարող են համայնքի կողմից պիտակավորվել որպես «անզավակ»:

Տղա երեխային նախապատվություն տալը մեծապես պայմանավորված է լինում ամուսնու ցանկությամբ, կանայք պարզապես հնազանդվում են: Որոշիչ կարող է լինել նաև սկեսրոջ կարծիքը, որն էլ պայմանավորված է շրջապատի թելադրանքով՝ «Իսկական տղամարդ է տղա ունենում»...

«Կանայք բռնության են ենթարկվում ամուսինների և սկեսուրների կողմից և ստիպված գնում աբորտի: Բռնության վերացման դեպքում պտղի սեռի ընտրությամբ պայմանավորված աբորտների թիվը կկրճատվի»,- նշել է հարցվածներից մեկը:

Ֆեյսբուքյան բացահայտումներ

Լուսանկարը՝ Լիլիան Գալստյանի

«Ձեռքը դնում բերանին ու ասում էին՝ վաաաայ... Իսկ ես ծիծաղում էի»

Գոհար Ղումաշյան. «Ես սկզբից նեղվում էի, բայց հիմա իմունիտետ եմ ձեռք բերել: Երեք աղջիկ ունեմ, ամենից դաժանը երրորդ հղիության ժամանակ էր: Ով իմանում էր, որ աղջիկ է, ձեռքը դնում էր բերանին ու ասում՝ վաաաայ... Իսկ ես ծիծաղում էի»:

Անի Չիդեմյան. «Երբ սոնոգրաֆիա էինք անում, որ սեռն իմանանք, բժիշկն ամուսնուս ցույց տվեց էկրանն ու ասաց. «Աղջիկը խոնավությունից էլ կլինի, քոնը կոնկրետ տղա ա... Զարմանալի է, որ բժշկի արժեքներն են էդքան աղավաղված»...

Ռուզաննա Զազյան. «Հետաքրքիր է՝ եթե աղջիկները չլինեն, էդ տղաները ոնց և ումի՞ց են ծնվելու»:

Սուսաննա Մակարյան. «Ես աղջիկ ունեմ ու հիմա երկրորդին եմ սպասում ու չեմ մտածում, թե ինչ սեռի կլինի, կարևորը՝ առողջ բալիկ լինի: Մեծ հաճույքով աղջիկ կբերեմ էլի ու հեչ չեմ նեղվի: Եթե նկատել եք, էսօրվա դրությամբ աղջիկներն իրենց ծնողներին ավելի շատ են տեր կանգնում, քան տղաները»:

Զառա Հովհաննիսյան. «Ես զույգ աղջիկ ունեմ ու երբ պատրաստվում էի երրորդն ունենալ, բոլոր կողմերից ասում էին, թե հա, պարզ ա, երևի հաշվարկել եք, որ տղա լինի, իսկ մենք ոչ միայն չէինք հաշվարկել, այլև բոլոր հաշվարկները ցույց էին տալիս, որ ունենալու եմ երրորդ աղջիկը: Երբ արդեն ժամանակն էր վերջին հետազոտման, էխոյի բժիշկը, ով լավ գիտեր ինձ էլ, զույգերիս էլ, վերջին զննումը կատարելիս ասաց՝ դե, երևի սեռը գիտեք, չէ՞: Ասեցի՝ չէ՛ իհարկե: Ասեց՝ ո՞նց, բա երկու աղջկանից հետո չգիտեի՞ք, որ տղա եք ունենալու: Ասածս ի՞նչ է, շատերը այ սենց չքնաղ աղջիկներին վերացնում են, ես էլ հակառակը, պատրաստվում եմ էլի ունենալ աղջիկ: Էս անգամ արդեն երեք երեխաներս են խնդրում, որ փոքրիկ քույրիկ ունենամ իրենց համար:

Նատաշա Հարությունյան. «Երբ դեռ չգիտեի երեխայիս սեռը, բոլորն ասում էին, որ հաստատ տղա եմ ունենալու... Ինձ համար միևնույնն էր, ավելին՝ աղջիկ էի նախընտրում, բայց բոլոր հարազատներս տղայի էին տրամադրվել: Հետո արդեն, երբ հղիության 4-րդ ամսում էի, իմացա, որ աղջիկ եմ ունենալու... Երբ բժիշկն ասաց՝ աղջիկ, էնքան ուրախացա, որ բժիշկն էլ զարմացավ, ասաց՝ ինձ հանդիպած առաջին հղին ես, որ աղջիկ լսելով՝ ուրախանում ես, հատկապես՝ առաջին երեխայի դեպքում: Սեռը կապ չունի, մարդ պետք է հիանա այն հրաշքով, որ կատարվում է իր ներսում...»

Օրենքի ուժով

Ինչպե՞ս փրկել Հայաստանի «չծնված աղջիկներին»

● **Նախածննդյան փուլում արգելել պտղի սեռի բացահայտումը.** այս միջոցը չի կարող արդյունավետ լինել, քանի որ այն զգալի կոռուպցիոն ռիսկեր է պարունակում: Միշտ կգտնվեն բժիշկներ, որոնք կհայտնեն երեխայի սեռը որոշակի գումարի դիմաց: Նման դեպքեր արձանագրվեցին վերջերս, նույնիսկ նման արգելքի բացակայության պարագայում:

● **Հղիության արհեստական ընդհատումները օրենքով արգելելն** առավել անընդունելի միջոց է համարվում, քանի որ սահմանափակում է կանանց՝ մարդու իրավունքներն ու ազատությունները, և երկրորդ՝ կարող է ստիպել կանանց դիմելու ոչ բժշկական եղանակով հղիության ընդհատումների, ինչը կբերի լուրջ առողջական խնդիրների առաջացմանը: Աբորտների արգելման անհաջող փորձը Խորհրդային Միությունում դրա վկայությունն է:

● **Ֆինանսական աջակցության տրամադրումը** աղջիկ երեխա ունենալու և մեծացնելու համար նշանակալի արդյունքներ չի տալիս. դա է վկայում Հնդկաստանի փորձը, որտեղ այս միջոցը կիրառվել է: Բացի այդ, դա իր հերթին բերում է խտրականության տղա երեխաների նկատմամբ:

● **Ծնելիության մակարդակը բարձրացնելը** բարդագույն խնդիր է ցանկացած երկրի համար: Մասնագետների գնահատմամբ՝ այս հարցում թեկուզ մեկ տասներորդականի չափով արդյունք ստանալու համար բավականին մեծ ներդրումներ են պահանջվում:

● **Խնդրի հանրայնացումը՝ զանգվածային լրատվամիջոցների** և սոցիալական ցանցերի օգնությամբ, անհրաժեշտ միջոց է՝ հաշվի առնելով այն, որ խնդրի հիմքում կարծրատիպային բնույթի պատկերացումներն են, և անհրաժեշտություն կա ներազդելու մտածելակերպի և մարդկանց վարքագծի վրա:

● **Գենդերային հավասարության խթանումը** և կանանց հնարավորությունների ընդլայնումը՝ հատկապես այս միջոցն են կարևորում փորձագետները՝ պտղի նախածննդյան ընտրության խնդրով Հայաստանում կատարված բոլոր հետազոտությունների արդյունքում: Մինչդեռ Հայաստանում մարդիկ թերահավատորեն են մոտենում պտղի սեռով պայմանավորված աբորտների և գենդերային անհավասարության կապին: Շատերը նույնիսկ դրական են վերաբերվում այդ երևույթին՝ տղամարդուն համարելով հողի և ընտանիքի պաշտպանը, հատկապես երբ բազմաթիվ չափահաս տղամարդիկ լքում են երկիրը: Մասնագետների կողմից դրան հակակշռող փաստարկն այն է, որ ապագա զինվորներ ունենալու համար մայրեր են պետք:

Պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումն արգելվելու է

Դեռևս այս տարվա հուլիսին Կառավարության հավանությանն արժանացած «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը երկար փնտրտուքների արդյունք է՝ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների պրակտիկային վերջ տալու ուղղությամբ: Այն օրենքի ուժ կստանա միայն Ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո: Օրինագիծն արդեն Ազգային ժողովի օրակարգում է և քննարկման է դրվելու առաջիկայում:

Արգելքն ամրագրվում է օրենքով

ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանի ներկայացմամբ՝ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է սեռով պայմանավորված հղիության ընդհատումների արգելքն ամրագրել օրենքով, ինչպես նաև սահմանել իրավական լրացուցիչ կարգավորումներ և մեխանիզմներ, որոնք կոչված են հղիության արհեստական ընդհատման հարցում արձանագրված բացերը վերացնելու:

Ըստ այդմ, ինչպես նշված է նախագծի հիմնավորման մեջ, առաջարկվում է. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը ամբողջովին վերահայել՝ հստակ ամրագրելով սեռով պայմանավորված աբորտ կատարելու արգելքը, որի խախտման դեպքում արարքը կդիտարկվի որպես ապօրինի կատարված և կհանգեցնի օրենքով նախատեսված պատասխանատվությանը»:

Երեք օր՝ վերջնական որոշում կայացնելու համար

Հայաստանի առողջապահության նախարարության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ Գայանե Ավագյանի ներկայացմամբ՝ օրինագծով առաջարկվում է ամրագրել մի շարք կարևոր դրույթներ: «Մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը կինը թեև կարող է իր ցանկությամբ ընդհատել իր հղիությունը, սակայն այժմ այդ քայլին դիմելու համար գրավոր դիմում ներկայացնելու պահանջ է դրված: Կնոջը տրամադրվում է 3 օրացուցային օր, որպեսզի կինը լրացուցիչ անգամ մտածի, խորհի իր ցանկության և որոշման մասին: Այդ ընթացքում բժիշկը պետք է կնոջն անպայման տրամադրի հոգեբանական, սոցիալական խորհրդատվություն և փորձի հասկանալ հղիության ընդհատմանը դիմելու պատճառները: Բժիշկը պետք է ամեն ինչ անի կնոջը ցույց տալու, որ իր արգանդում զարգանում է մի էակ, որն արդեն իսկ ունի ապրելու իրավունք, ունի սրտի աշխատանք, ունի ձևավորված մարմնի մասեր: Նման բացատրությունը, իր ապագա երեխային տեսնելը շատ-շատ մայրերին հղիությունն ընդհատելուց հետ կպահեն»,- ասում է Գայանե Ավագյանը՝ նշելով, որ այս օրինագիծը, ըստ էության, ուղղված է ոչ միայն սեռով պայմանավորված հղիության ընդհատումների, այլև ընդհանրապես աբորտների թվի նվազեցմանը: Թեպետ, ընդգծում է նա, օրինագիծը չի սահմանափակում կնոջ՝ մինչև 12 շաբաթական հղիության ընդհատման իրավունքը, եթե դա պայմանավորված չէ պտղի սեռով:

Նշենք,որ վերջնական որոշում կայացնելու համար հատկացվող ժամանակահատվածը տարբեր երկրներում տարբեր է՝ Գերմանիայում 3 օր է, Նիդեռլանդներում՝ 5 օր, Իտալիայում և Ֆրանսիայում՝ 7 օր, Բելգիայում՝ 6 օր, ԱՄՆ-ում՝ 18 ժամից մինչև 3 օր: Հայաստանում մինչ օրս որևէ ժամանակահատված այդ նպատակով սահմանված չէր:

Բժիշկները կտուգանվեն

Փոփոխությունները հստակ սահմանում են նաև հղիության արհեստական ընդհատումից առաջ և հետո բժշկի անելիքները: Ներկայացվող օրինագծի հետ մեկտեղ նախատեսվում են նաև փոփոխություններ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, ըստ որոնց վարչական պատասխանատվություն է սահմանվում այն բժիշկների նկատմամբ, ովքեր կխախտեն օրենքով սահմանված պահանջները:

Ըստ առաջարկվող փոփոխությունների՝ պարտադիր գրանցում չկատարելու, խորհրդատվություն չտալու, վերջնական որոշում կայացնելու նպատակով ժամանակահատված չտրամադրելու դեպքում բժշկների համար տարբեր չափի տուգանքներ են նախատեսվում՝ նվազագույն աշխատավարձի 40-50-ապատիկի մինչև 80-100- ապատիկի չափով:

Պե՞տք է արդյոք ծնողներն իրավունք ունենան ընտրելու իրենց երեխայի սեռը

Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին եվրոպական կոնվենցիայով արգելվում է սեռի նախածննդյան ընտրությունը: 14-րդ հոդվածում ասվում է. «Չի թույլատրվում օժանդակ բժշկական տեխնոլոգիաների կիրառումը ապագա երեխայի սեռի ընտրության նպատակով, բացառությամբ այն դեպքերի, երբ դա արվում է՝ կանխելու ապագա երեխայի կողմից սեռով պայմանավորված հիվանդության ժառանգումը»:

Փորձագետի կարծիք

Կանայք միշտ չէ, որ խոստովանում են...

Վերջերս հրապարակված Առողջապահության ազգային ինստիտուտի «Առողջություն և առողջապահություն» վիճակագրական տարեգրքից տեղեկանում ենք, որ 2014-ին Հայաստանում արձանագրված 8379 հղիության արհեստական ընդհատումներից միայն 2212-ն են կատարվել բժշկական ցուցումով, 6040-ը՝ կնոջ ցանկությամբ:

Մասնագետների պնդմամբ՝ վերջին 20 տարիներին աբորտների թիվը Հայաստանում 3-4 անգամ նվազել է, և դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ սկսած բնակչության թվի նվազմամբ, ըստ այդմ էլ՝ ծնունդների թվի նվազմամբ, վերջացրած իրազեկվածության մակարդակի բարձրացմամբ:

Ի պատասխան մեր այն հարցին, թե տարեկան 45.713 ծնունդի համեմատ 8379 աբորտը շա՞տ է, թե՞ քիչ, ՀՀ առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ Գայանե Ավագյանը հիշեցնում է, որ 1980-90-ական թվականներին ունեցել ենք 20-30 հազար աբորտ, եղել են նույնիսկ տարիներ, երբ 1 ծնունդին գրեթե 1 աբորտ է բաժին հասել: «Այսօր 5 ծնունդին 1 աբորտ է հասնում, ու դա նորմալ թիվ է համարվում»,- ասում է նա:

Նշենք սակայն, որ տարեգրքում ներկայացված են միայն արձանագրված աբորտները, այսինքն՝ այդ թվի մեջ ներառված չեն հղիության արհեստական ընդհատման այն դեպքերը, որոնք տեղի են ունեցել առանց բժիշկների միջամտության, ասենք, վերջերս մեծ տարածում գտած «Սայտոտեկի» օգտագործման միջոցով, որի ազատ վաճառքն անցյալ տարի առողջապահության նախարարության կողմից արգելվեց:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե քանի կին է տարեկան պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատման դիմում, ապա նման վիճակագրություն, հասկանալի պատճառներով, գոյություն չունի, քանի որ կանայք միշտ չէ, որ խոստովանում են աբորտի դիմելու իրական պատճառը: «Բժիշկը, որ աբորտ է անում, չի կարող իմանալ, թե կինն իրականում ի՛նչ պատճառով է այդ որոշումը կայացրել՝ տնտեսակա՞ն, ֆինանսակա՞ն, ընտանեկա՞ն, թե՞ այլ պատճառներից ելնելով: Իսկ հարցին, թե ինչու՞ է անում, սովորաբար ստանում է «պայմաններ չունեմ» պատասխանը»,- ասում է Գ. Ավագյանը, նշելով, որ նախարարությունը անհրաժեշտ ինֆորմացիան կարող է ստանալ միայն նպատակային հետազոտությունների միջոցով:

Երազում եմ

Մեր զրուցակիցներն են Երևանի 115-րդ դպրոցի աշակերտուհիները

Լուսինե Բաբաջանյան,13 տարեկան.

- Երբ դպրոցում բադմինթոնի խմբակ բացեցին, մայրիկիս խորհրդով սկսեցի հաճախել, հետո էլ շատ սիրեցի այս մարզաձևը, տարբեր մրցումների, առաջնությունների եմ մասնակցել, ունեմ մրցանակներ, որոշել եմ սպորտով շարունակել հետագայում:

Թագուհի Թագվորյան, 14 տարեկան.

- Փոքր տարիքից երգի եմ հաճախում, սիրում եմ նաև պարել: «Օիածան» համույթում եմ հանդես եկել, տարբեր հյուրախաղերի ենք մեկնել: Երազում եմ երգչուհի դառնալ կամ դերասանուհի: Ինձ հայաստանյան բեմում եմ տեսնում:

Ջուլիետա Հակոբյան, 15 տարեկան.

- Ուզում եմ ոստիկան դառնալ, հայրիկիս պես, տանը ուրախ են իմ որոշման համար: Անպայման ուզում եմ ոստիկանական ակադեմիա ընդունվել:

Մարիամ Տաբատածե, 14 տարեկան.

- Մի քանի տարի առաջ ամենից շատ ուզում էի մոդել դառնալ, ինձ շատ էր դուր գալիս, երբ բեմում քայլում էին աղջիկները, գեղեցիկ զգեստներ ցուցադրում, իսկ հիմա միտքս փոխել եմ, ուզում եմ տնտեսագետ դառնալ, գուցե բանկում աշխատեմ, ուզում եմ արտերկրում սովորել, լավ կրթություն ստանալ:

Անի Խաչատրյան, 15 տարեկան.

- Երբ շատ էի փոքր, եղբայրս նետաձգության էր գնում, ես էլ նայում էի նրան ու երազում՝ շուտ մեծանալ: 9 տարեկանից սկսեցի հաճախել նետաձգության, Հայաստանի առաջնությունում երկրորդ տեղն եմ գրավել, տարբեր առաջնությունների էլ եմ մասնակցել, մրցանակներ ունեմ: Դեռ չեմ որոշել՝ ինչ եմ դառնալու:

Մելինե Նիկողոսյան, 15 տարեկան.

- Երաժշտական դպրոց եմ հաճախում, դաշնամուր եմ նվագում, նաև երգում եմ համույթում, բայց ապագայում ինձ դիվանագիտական աշխատանք կատարելիս եմ պատկերացնում, միջազգային հարաբերությունների ֆակուլտետ եմ ուզում ընդունվել, լեզուներ եմ շատ սիրում, ուզում եմ, որ մեր երկրի համար լավ գործ անեմ, որ այն լավը լինի, բարգավաճի:

Լիլիթ Մանուկյան, 15 տարեկան.

- Ամենից շատ ֆրանսերեն լեզուն եմ սիրում, Ֆրանկոֆոնիայի օրերին եմ մասնակցել, ֆրանսերենի տարբեր օլիմպիադաների: Ուզում եմ անպայման սովորել Սորբոնի համալսարանում, դիվանագետ դառնալ ու դեսպանատանն աշխատել:

Մերի Գալստյան, 12 տարեկան.

- Իմ ամենասիրելի զբաղմունքներից մեկը ձեռքի աշխատանքներ պատրաստելն է: Տարբեր իրերից, խխունջներից զարդեր եմ պատրաստում՝ թևնոց, ապարանջան, նաև գործել եմ սիրում՝ շյուղերով կամ միայն ձեռքի մատներով. շարֆեր եմ գործում: Դեռ չեմ որոշել՝ ինչ եմ ուզում դառնալ, բայց անչափ շատ եմ ուզում ԱՄՆ-ում և Անգլիայում լինել, տեսնել այդ երկրները, նաև գնումներ կատարել…

Էմմա Գրիգորյան, 17 տարեկան.

- Ես «Պատանի երկրապահ» ակումբ եմ հաճախում, աղջիկների վաշտից եմ: Զինվորական գործ շատ եմ սիրում, շատ լավ քանդում և հավաքում եմ հնքնաձիգը: Ոչ մի տեղ չեմ ուզում մեկնել, ուզում եմ մնալ ու ապրել իմ երկրում ու ապագաս էլ հենց Հայաստանում եմ պատկերացնում: Ես կուզեի, որ աղջիկներն էլ բանակ գնան: Երբ կարդում ես «Սասան ծռեր» էպոսը, այնտեղ շատ քաջ կանանց օրինակներ ես տեսնում, ովքեր պաշտպանել են իրենց տունը: Աշակերտական խորհրդի նախագահն եմ եղել դպրոցում, բայց հիմա չեմ հասցնում, քրտնաջան պարապում եմ, ուզում եմ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետ ընդունվել: Ապագայում որպես դասախոս եմ ինձ տեսնում:

Գայանե Էվոյան, 13 տարեկան.

- Դաշնամուր եմ սիրում նվագել, գրքեր ընթերցել ու նաև ֆիլմեր դիտել: Ուզում եմ հոգեբան դառնալ, հասկանալ մարդկանց, օգնել նրանց, որ մի քիչ ավելի թեթև ապրեն, հոգսեր քիչ ունենան:

Էլմիրա Գուլքանյան, 13 տարեկան.

Քիմիա, կենսաբանություն առարկաներն եմ նախընտրում, ճիշտ է՝ շատ լավ չի ստացվում ինձ մոտ, բայց միևնույնն է՝ հետաքրքիր է ինձ համար, հատկապես որ անպայման որոշել եմ մանկաբույժ եմ դառնալ, օգնել բոլոր երեխաներին, որ առողջ լինեն: Չեմ ուզում, որ մարդիկ մեր երկրից գնան, եթե ամեն մեկս մի քիչ լավ գործ անենք, շատ լավը կդառնա մեր հայրենիքը: Ես Բերդավանից եմ, մի քանի տարի է, որ տեղափոխվել ենք Երևան, եղբայրս էլ հիմա բանակում է ծառայում: Շատ եմ ուզում, որ խաղաղ լինի, զինվորներն առողջ տուն գան, իմ հայրենիքում էլ մարդիկ հանգիստ ապրեն:

Երկու պատմություն

Գոհարին դիտմամբ ծանր աշխատանքների էին լծում, որ վիժի...

26-ամյա Գոհարի համար (անունը փոխված է) ճակատագրական եղավ հղիության արհեստական ընդհատումը: Արդեն երկու տարի է՝ կինը մի բժշկից մյուսն է գնում: Նրան ինչքան էլ բուժում են, ջանում են պահպանել պտուղը՝ չի հաջողվում: Գոհարն արդեն որերորդ անգամն է՝ հղիության 5-6-րդ շաբաթականում վիժում է: Բժիշկները նրան ասում են՝ մեծ է հավանականությունը, որ աբորտն է պատճառը:

Ես, ճիշտն ասած, չէի ուզում աբորտ անել, համ վախենում էի, համ էլ մտածում էի՝ եթե հղիացել եմ, ուրեմն Աստված է կամեցել: Բայց սկեսուրս որոշեց իմ ու իմ երեխայի փոխարեն: Հըը սկեսուրիս դեմ մի կերպ կպայքարեի, կհակառակվեի, բայց ամուսինս ինձ չպաշտպանեց»,- ասում է Գոհարը:

Գեղարքունիքի մարզում բնակվող այս կինը պատմում է, որ երկու դուստր ունի, ամուսինն ու նրա ծնողները դեմ են եղել նույնիսկ երկրորդ դստեր լույս աշխարհ գալուն: Գոհարն ասում է՝ բախտը բերել է, որ ուշ են դիմել բժշկի, որն էլ հրաժարվել է աբորտ անելուց:

Գոհարն ասում է, որ ամուսնուն ամիսներով չի տեսնում, տարվա մեծ մասը Ռուսաստանում է լինում՝ արտագնա աշխատանքի: Երկրորդ դստեր՝ Մարիամիկի ծնվելուց Գոհարը նորից է հղիացել, ու նորից բժիշկները պտղի սեռն աղջիկ են ասել: Այս անգամ Գոհարին չի հաջողվել պայքարել երեխային կյանք պարգևելու համար. հղիությունն արհեստական ընդհատել է՝ ամուսնու և սկեսրոջ դրդմամբ:

«Ասում էին՝ մորդ նման մենակ աղջիկ ես բերում, մենք ինչի՞ տեր ենք, որ երեք աղջիկ ունենանք, ո՞նց ենք պահելու, էս օջախին տղա ա պետք, բա մեր ազգը շարունակող չունենա՞նք: Հիմա ինչքան հղիանում եմ, պտուղը չի ապրում, վիժում եմ: Ինձ մեղավոր եմ զգում, եսիմ, երևի Աստված է պատժում»,- ասում է նա: Սկեսուրն էլ ամեն անգամ Գոհարին երեսով է տալիս, թե՝ հիվանդոտի մեկն է, չի կարողանում երեխա ունենալ:

Գոհարն ասում է՝ օրենք լինի-չլինի՝ իր սկեսուրն ու գուցե նրա նմանները ամեն ապօրինի քայլի կդիմեն, եթե չեն ցանկանում աղջիկ ծնվի: «Երբ Մարիամիկիցս սկեսուրս ուզում էր ազատվեի, բայց բժիշկը հրաժարվել էր աբորտ անելուց, սկեսուրս ինձ դիտավորյալ այնպիսի աշխատանքներ էր տալիս, որ երեխայիս մի բան լիներ: Ասենք՝ կարտոֆիլի ծանր մեշոկները տանեի նկուղ, ամբողջ տան, իսկ մեր տունը մեծ է, պատուհաններն ամեն ամիս լվանայի, ստիպում էր աստիճանի վրա կանգնած լյուստրաները լվանայի, աստիճանի մի ոտքը թույլ էր, շարժվում էր: Ինքը միշտ հպարտ-հպարտ պատմում էր, թե ոնց ա ազատվել իր երեխայից: Գլուխ գովելով պատմում էր՝ «թթվի ծանր բոչկեն գրկում էի, մի տեղից մյուսը տեղափոխում, բարձր տեղից թռնում, որ վիժեի, վերջը՝ վիժեցի»:

Գոհարի խոսքով՝ տղա էին ուզում՝ երկու աղջիկ ունեցան. սկեսուրն ամբողջ օրն ասում է՝ ո՞նց ենք սրանց պսակելու, օժիտ տալու. «Ոնց որ թշնամու երեխաների մասին խոսի, այլ ոչ թե իր թոռների: Ամեն առիթով ինձ ասում է՝ ծուխս ես չորացնում, երանի՜ արգանդդ չորանար: Իսկ ամուսինս էլ ասում է՝ բա ո՞ւմ համար եմ էսքան աշխատում, բա տղա չունենա՞մ»:

«Աղջիկ ծնվելուց աչքալուսանք չեն տալիս»

Անահիտը Սյունիքի մարզի գյուղերից մեկում է ապրում: Խնդրեց չհրապարակել գյուղի անունը. ասում է՝ իր պատմության մասին բոլորը գիտեն, կճանաչեն, ու քննարկման թեմա կլինի: Երեք երեխա ունի 34-ամյա կինը՝ երկու աղջիկ, մեկ տղա: Պատմում է, որ առաջնեկն աղջիկ էր, ընտանիքում բոլորն ուրախ էին, մտածում էին, որ երեխաներից ավագը կօգնի տան գործերում, հետո էլ տղա կծնվի: Սակայն երկրորդ աղջկա ծնվելը Անահիտի կյանքում շատ բան փոխեց. դժվար փորձություն էր սպասվում:

Տասներկու տարի առաջ էր, հոկտեմբեր ամիս. էսօրվա պես հիշում եմ՝ աննկարագրելի ցուրտ օր էր, երկրորդ աղջկաս ունեցա: Տնեցիներն այդ մասին որ իմացան, չեմ կարող նկարագրել, թե ի՛նչ արձագանք եղավ՝ հատկապես կիսուրիս կողմի»,- հիշում է Անահիտը:

Նրա խոսքով՝ բոլորը վստահ էին, որ տղա է ծնվելու: Սակայն աղջկա լույս աշխարհ գալն անընդունելի էր հատկապես սկեսրոջ համար:

«Կիսուրս ոչ մի կերպ չթաքցրեց հիասթափությունը: Սովորաբար նոր ծննդաբերած կնոջը հիվանդանոց տեսության են գալիս, ուտելիք բերում, ինքն ինձ այդպես էլ այցելության չեկավ, ոչ էլ ուտելիք ուղարկեց: Մայրս էր ամեն օր ինձ այցի գալիս, մեկ-մեկ էլ՝ ամուսինս»:

Անահիտը նշում է, որ երբ գյուղում հարևաններն աչքալուսանք են տվել, սկեսուրը պատասխանել է՝ աղջիկ ծնվելուց աչքալուսանք չեն տալիս:

«Հիվանդանոցից դուրս գրվելու օրը արցունքներն աչքերիս էին, չէի ուզում տուն վերադառնալ, այնպիսի զգացում ունեի, որ ես եմ մեղավոր ամբողջի համար: Երբ տուն եմ եկել, երեխան գրկիս կիսուրս չի էլ մոտեցել, որպեսզի տեսնի: Երկու օր անց թասը դուրս է տարել, որ ցրտին երեխայիս շորերը լվանամ: Ամուսինս ասել է՝ երկու օր է ծննդաբերել, էս ինչի՞ ես դուրս հանել, պատասխանել է՝ ոչինչ, թող էստեղ լվացքն անի: Ուզում էր պատժել, ու ես միշտ ասում էի՝ ես ի՞նչ մեղավոր եմ, որ աղջիկ է ծնվել, նման դեպքերը շատ են»:

Այս պատմությունից 12 տարի է անցել: Անահիտը պատմում է, որ տատի դիրքորոշման մասին աղջկան պատմել է, ասել, որ իր ծնվելը անցանկալի է եղել ընտանիքի անդամների համար:

«Երբ աղջիկս հիշում է այդ պատմությունը, սկսում է լացել, ասում է՝ դուք ինձ չեք սիրում: Կիսուրիս հարցնում եմ՝ հիմա թոռներիցդ ինքն է ամենաշատը քեզ սիրում, ինչի՞ էիր էդպես ասում, պատասխանում է՝ լավ եմ արել: Մինչև հիմա երբեք չի ասել, որ սխալվել է: Կարծում եմ՝ ինձ չէր ների, եթե երրորդ երեխաս տղա չլիներ, էդ ժամանակ եկավ հիվանդանոց, ճակատս համբուրեց, ասեց՝ ապրես»:

Չեմ հասկանում

Ես պարզապես մայր եմ

Երեք դուստրերի մայր 31-ամյա Լուսինեն ասում է, որ եթե նորից հղիանա, ու նորից աղջիկ լինի, հղիությունը չի ընդհատի. «Ի՞նչ հիմարություն է, իբր թե՝ տղան է ծնողներին ծերության օրոք պահողը, ցեղի շարունակողը: Դրանք անկիրթ մարդկանց կարծրատիպեր են: Մենք երկու քույր ենք, եղբայր չունենք ու հիմա տղայից լավ ենք տիրություն անում մեր ծնողներին, դաստիարակության հարց է: Աղջիկ երեխա ունենալը նույնքան երջանկություն է, որքան՝ տղա: Ես միշտ չեմ հասկացել այն կանանց, որոնք լինելով իգական սեռի ներկայացուցիչ՝ չեն ուզում աղջիկ երեխա ունենալ, չէ՞ որ նրանք, կին լինելով, մեկ այլ կնոջ կյանքն են ընդհատում»:

Լուսինեն ասում է, որ իր երրորդ դստերը կյանքի գնով է ունեցել, մեծ դժվարությամբ է ծննդաբերել, հղիությունն էլ ծանր էր, նույնիսկ բժիշկներից մեկը խորհուրդ է տվել՝ կյանքը չվտանգել, ընդհատել հղիությունը, սրտի խնդիր կար. «Ու մենք արդեն գիտեինք, որ երրորդն էլ է աղջիկ, բայց իմ ու ամուսնուս մտքով էլ չանցավ ընդհատել հղիությունը, իբր, դե, երկու աղջիկ արդեն ունենք: Ամուսինս երբեք չի էլ ակնարկել՝ բա տղա չունենամ, բա ամոթ չի, ու նման բաներ: Մենք երեք դուստրերի երջանիկ ծնողներ ենք, ու եթե էլի հղիանամ, ու էլի աղջիկ լինի, ոչ մի դեպքում աբորտ չեմ անի: Ի վերջո, դու՝ որպես մայր, պարզապես մարդու կյանք ես տալիս, ի՞նչ տարբերություն, թե ի՛նչ սեռի կլինի»:

Հայրերի ձայնը

Աղջիկներս...

Այս պատմությունը ներկայացվել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և «Մեդիամաքս» մեդիաընկերության կողմից վերջերս հայտարարված «Իմ աղջիկը» շարադրությունների մրցույթին: Հեղինակները հայրերն են, ովքեր պատմում են իրենց դուստրերի մասին: Մեզ հատկապես հետաքրքրեց մրցույթին ներկայացված Թևան Պողոսյանի ընտանիքի պատմությունը, քանի որ ութ տարի առաջ մեր թերթի համարներից մեկում անդրադարձել էինք այս հետաքրքիր ընտանիքի պատմությանը: Այն ժամանակ նրանք վեցով էին՝ ամենափոքրիկը դեռ չէր ծնվել, Թևան Պողոսյանը պատգամավոր չէր, մեր թերթն էլ գունավոր չէր...

Սպասում էի: Արդեն տասներորդ ժամն էր անցնում ծննդատանը...

- Աչքներդ լո՜ւյս, աղջիկ եք ունեցել,- ականջիս հասավ բարձրահասակ բուժքրոջ զվարթ ձայնը:

Սրտիս հարվածների արագությունից մի պահ թվաց՝ խլացել եմ: Աչքերս մոռացել էին՝ թարթելն ի՛նչ է: Ոտքե՞րս ուր են: Հա՛, հա՛, էստեղ են ու ինձ տանում են աջ ու ձախ, ձախ ու աջ... Չորրորդ անգամն էր արդեն, որ նույնն էի լսում, բայց ամեն անգամ ինձ թվում էր, թե դա առաջին ու միակ, անսպասելի ու անկրկնելի պահն ու զգացողությունն է: Սկսեցի գոռգոռալ ու ծափ տալ: Քույրն ասաց, որ կարող եմ տեսնել կնոջս: Վազեցի: Աշխարհի ռեկորդակիրն անգամ էդ պահին չէր կարող հասնել ինձ: Վազեցի: Ուզում էի գրկել նրան, պահել գրկումս ու բաց չթողնել: Պտտվել ու պտտվել՝ անվերջ շշնջալով ականջին, թե ինչքա՜ն շնորհակալ եմ:

Հետո տեսա աղջկաս՝ Ադրինեին: Պուճուրիկ էր: Վտիտ: Ինչպես պարտեզում հենց նոր քաղած ծաղիկը: Այդ ծաղկի պես նրան էլ էր խնամք պետք: Նայեցի կնոջս աչքերին: Համոզված էի, որ երջանկություն եմ տեսնելու, բայց ինչ-որ անորոշություն, հապաղում նկատեցի: Ասես երջանկությանը սեղմել էին անկյունում, որտեղ այն սպասում էր իմ հավանությանը՝ պոռթկալու: Համբուրեցի կնոջս ու ժպտացի.

- Է, ի՞նչ անենք, թե տղա չունենք: Աշխարհի ամենաերջանիկ հայրն եմ: Պուճուր ունենք, պուճուրիկ աղջիկ,- գոռգոռում էի ես՝ չփորձելով անգամ զսպել արցունքներս:

Կիրակի առավոտ էր: Դռան թակոց լսեցի՝ մեղմ, փոքր-ինչ վախվորած: Զգացի, թե ինչպես դուռն սկսեց դանդաղ սահել գորգի վրայով: Արագ շրջվեցի՝ տեսնելու, թե որ հիմարն է համարձակվել ինձ արթնացնել կիրակի առավոտյան, երբ ամբողջ շաբաթ քիփ մարելու ժամանակ չեմ ունեցել: Այն, ինչ տեսա, իմ հոգնածությունից կարմրած ու զայրացած աչքերի համար նույն սպեղանի էր, ինչ գարնանային արևը՝ համառող ձնից ազատվել տենչացող հողի համար: Քրիստինան թեյերի տուփն էր բռնել, Էնջըլը՝ խնձորներից ու նարինջներից ճկվող սկուտեղը: Մանեն թթվասերի, կաթնաշոռի ու մեղրի թասերով էր աճպարարություն անում, իսկ Ադրինեն քչփորում էր տաք ու փափուկ հացը: Նրանք էնպես լուրջ ու խելոք էին կանգնել, ասես իսկապես վախեցել էին իմ «կատաղած» հայացքից:

Ժպտացի: Ժպտացին աղջիկներս: Առավոտ լուսո: Առավել լուսավոր առավոտ, քան արթնանալ փոքրիկներիդ սիրող ժպիտներով, չի լինում:

Չկա այլ հրաշք, քան գիտակցել, որ քո արյունը, քո հայությունը, քո ինքնությունն ու արժեքները շարունակելու են հաջորդ սերունդները: Երբ Քրիստինան փորձում է կարգի հրավիրել քույրերին, թե՝ մի՛ կռվեք, թե քույր լինելուց կարևոր բան չկա էս կյանքում, երբ Էնջըլը սովորում է գիշեր ու ցերեկ, երբ Մանեն պատահաբար վառ թողած բոլոր լույսերն սկսում է հերթով անջատել, և երբ Ադրինեն սառնարանի վրայի հուշանվերներով մարդուկներ է պատրաստում, ես գիտեմ, որ շարունակվելու եմ: Նրանց՝ իմ աղջիկների մեջ ես ինձ եմ տեսնում՝ պարզորոշ ու հստակ:

Երբ յուրաքանչյուր «Աչքներդ լո՜ւյս, աղջիկ եք ունեցել» աշխարհի ամենահրաշալի լուրից հետո հարբած ու տանջված մտնում էի սենյակ փոքրիկ աղջկաս տեսնելու, միանգամից լռջանում էի: Գիտակցությունը, որ ինչ-որ յուրահատուկ բան է տեղի ունեցել, միանգամից սթափեցնում էր ինձ: Ինչ-որ ուրիշ, հատուկ զգացողություն է դա, որը ոչ մի հայր չի կարող զգալ, եթե աղջիկ չի ունեցել: Ինձ է վերապահված հոգալ դստերս մասին: Ես պիտի պաշտպանեմ նրան, ատելությամբ լցվեմ յուրաքանչյուր տղայի հանդեպ, ով կհամարձակվի մոտենալ նրան, անգամ մի հայացք նետել նրա վրա խանութում: Ես պետք է խիստ լինեմ աղջկաս հետ, թեև նա չի հասկանալու և գնահատելու դա հիմա, չի հասկանալու, որ խիստ, զայրացած կամ ամեն մի քայլը վերահսկող լինելը բնավ իմ ընտրությունը չէ:

Ես հույս ունեմ, երբ ծեր ու զառամյալ, մի օր կնոջս հետ նստած կլինենք ճտճտացող բուխարու մոտ, աղջիկներս կողքիս կլինեն՝ ուրախ, երջանիկ և շնորհակալ, որ ես հենց այդպիսի հայր եմ եղել:

Աղբյուրը՝ Mediamax.am, որտեղ դուք կարող եք գտնել ուրիշ հայրիկների ոչ պակաս հետաքրքիր պատմությունները

Համարի վրա աշխատել են՝
Լիլիթ Քոչինյանը, Լիա Խոջոյանը, Իրինա Յոլյանը,
Նելլի Բաբայանը, Արման Ղարիբյանը, Լալա Տեր-Ղազարյանը:
Գլխավոր խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
Էլ. հասցե՝ womennetam@gmail.com

Սույն թողարկումը լույս է տեսել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ:
Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը: